ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 13-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<բ>> պարբերության համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության գնումների պլանով նախատեսված 72241500 CPV կոդով «Պայմանագրային հիմունքներով համակարգային վերլուծության և ծրագրավորման ծառայություններ» գնման առարկայի ձեռքբերման նպատակով գնումների պատասխանատու ստորաբաժանում սահմանել խումբ՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը և ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը:
2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավասու ծառայողներին (աշխատողներին):

Ոստիկանության գնդապետ **Վ. Մովսիսյան**

<<29>> ----04----2022թ.
ք.Երևան